



Մամուլի հաղորդագրություն
19 փետրվարի 2021թ.

Հրատապ օգնություն Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքներին

ԵՐԵՎԱՆ -- Եվրոպական միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի (ՔՈԱՖ) կողմից իրականացվող «Հրատապ օգնություն Լեռնային Ղարաբաղից տեղահանված ընտանիքներին» ծրագրի շրջանակում 150 ընտանիք կստանա աջակցություն:

Ծրագրի արդյունքում, որի արժեքը կազմում է 60. 000 եվրո, Արագածոտնի, Արմավիրի, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի՝ ՔՈԱՖ-ի շահառու համայնքներում ապաստանած 150 տեղահանված ընտանիքների կտրամադրվեն առաջին անհրաժեշտության փաթեթներ, որ ներառում են սնունդ, հիգիենայի և բժշկական պարագաներ, ծնեռային հագուստ, իսկ 450 երեխա կստանա գրենական պիտույքներ:

Հայաստանում Լիտվայի Հանրապետության դեսպանատան ֆինանսական ներդրման շնորհիվ և 35 երեխայի կտրամադրվեն պլանշետներ, իսկ 70 երեխա էլ կստանա գրենական պիտույքներով լի դպրոցական պայուսակներ: 150 ընտանիքների կմատուցվեն նաև սոցիալ-հոգեբանական, առողջապահական, իսկ երեխաներին՝ նաև լոգոպեդական ծառայություններ:

Փետրվարի 11-ին ՀՀ-ում Եվրոպական միության դեսպան Անդրեա Վիկտորինը և ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության դեսպան Ինգա Ստանիտե-Տոլոչկիենեն այցելեցին ՔՈԱՖ-ի երևանյան գրասենյակ, որտեղ և պատրաստվում էին փաթեթները, որոնք կբաշխվեն շահառու ընտանիքներին մինչ 2021թ. փետրվարի վերջ:

«Մենք շատ արժևորում ենք Հայաստանում ԵՄ պատվիրակության հետ այս ինքնատիպ համագործակցությունը: Առաջին անգամը չէ, որ համատեղ ջանքերով ճգնաժամի ենք արձագանքում: ՔՈՎԻԴ-19-ի համավարակի դեմ պայքարում մեր շահառուներին սատարելու շուրջ արդյունավետ համագործակցությունից հետո այս անգամ էլ կանգնած ենք արցախցի մեր հայրենակիցների կողքին, որոնք ապաստան են գտել ՔՈԱՖ-ի շահառու համայնքներում», - ընդգծեց ՔՈԱՖ-ի գլխավոր տնօրեն Կորյուն Խաչատուրյանը:



«Արագ արձագանքման մեխանիզմի շրջանակներում սա Եվրոպական միության երկրորդ համագործակցությունն է ՔՈԱՖ-ի հետ: Հուսով եմ, որ մեզ հաջողվում է թեթևացնել բարդ



իրավիճակում հայտնված մարդկանց վիճակը, որոնք կորցրել են իրենց տները կամ որևէ կերպ տուժել են Լեռնային Ղարաբաղի հակամարտությունից: Ինչպես միշտ, մեզ համար հաճելի է համագործակցել ՔՈԱՖ-ի հետ՝ օգնելու բոլոր նրանց, ովքեր դրա կարիքն ամենաշատն ունեն», - նշեց ՀՀ-ում Եվրոպական միության դեսպան Անդրեա Վիկտորինը:

Ծրագրի վերջնական նպատակն է արձագանքել տեղահանված ընտանիքների առաջնային ու անհետաձգելի կարիքներին, ինչպես նաև ՀՀ կառավարության լիազորված մարմինների հետ կիսվել այդօրինակ ընտանիքների հետագա կարիքների բավարարման շուրջ առաջարկություններով:

Ծրագիրն իրականացվում է՝ համագործակցելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, և համակարգվում է մարզպետարանների ու տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ՝ նույնականացնելու Արցախից տեղահանված թիրախային ընտանիքներին և բացառելու դեպքերը, երբ միևնույն ընտանիքը կօգտվի աջակցությունից մի քանի անգամ:

Եվրոպական միության մասին

Եվրոպական միության անդամ երկրները որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նու-հաուն, ռեսուրսներն ու ուղիները:

50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրոպական միությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երեկրների ու ժողովուրդների հետ:

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Պեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները:



ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍՏԻ
EUROPEAN UNION FOR ARMENIA

2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը:



CHILDREN
OF ARMENIA
FUND

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: